

Վ. ԿՈԼԵՍՆԻԿ

ԼՐՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

(Տրոցկիսները Վաշինգտոնի հեռախոսալուծությունների
ծառայության մեջ)


ՀԱՅԿՈՒՍԶՐԱՏ • 1937

31 JAN 2018

Վ. ԿՈԼԵՍՆԻԿ

ԼՐՏԵՍԱԿԱՆ
ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Տրցելիսաները փափստական հետախուզությունների
ծառայության մեջ





11-2852099

В. КОЛЕСНИК

ИНТЕРНАЦИОНАЛ

(Троцкисты на службе фашистских разведок)

Армпартиздат, Ереван, 1937

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վետրվար-մարտյան պլենումում ընկեր Ստալինը, խոսելով լրտեսների, վնասարարների, դիվերսանտների տրոցկիստական բանդայի այն ռեզերվների մասին, վերջինք գտնվում են ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս, մատնանշեց տրոցկիստական հակահեղափոխական ինտերնացիոնալը, վերջ «յերկու յերբորդով բաղկացած ե լրտեսներից ու դիվերսանտներից»։ «Մի՞թե պարզ չե՞,—ասում եր ընկեր Ստալինը,—վեր այդ լրտեսական ինտերնացիոնալը կադրեր կտա տրոցկիստների լրտեսական-վնասարարական աշխատանքի համար»։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վետրվար-մարտյան պլենումից հետո անցել ե չորս ամսից մի քիչ ավելի, և յուրաքանչյուր ուր միշտ նոր, և նոր ապացույցներ ե բերում ընկեր Ստալինի խոսքերի։ Ֆաշիստական հետախուզությունները վերջան ել ջանք թափենք քողարկել իրենց տրոցկիստական վարձկանների իսկական դեմքը, այդ նրանց չի հաջողվում։ Տրոցկիստական լրտեսական ինտերնացիոնալը մերկացված ե ամբողջ աշխարհի առջև վերսկսա Փաշիստական հետախուզությունների դուրձակալ-պրովոկատորների շայկա։

Տրոցկիստների լրտեսական ինտերնացիոնալի նողկալի գործունեյությունը ցույց ե տալիս, վեր Փաշիստական պետություններն անցել են ԽՍՀՄ-ի և համաշխարհային բանվորական շարժման դեմ պայքարի նոր պրիմների, վեր նրանք իրենց լրտեսական-պրովոկատորական կենտրոնն են ստեղծում, տրոցկիստական կադրերով այն կոմպլեկտավորելու ճանապարհով։

Ամենուրեք, վերտեղ վեր հասնում են Փաշիստական հետախուզությունների շոշափուկները, վերջիններս ձգտում են կադմակերպել իրենց տրոցկիստական-լրտեսական շայկաները։ Ֆաշիստական հետախուզությունները հատուկ խնդիրներ են դնում տրոցկիստական-լրտեսական ինտերնացիոնալի վրա։

Տրոցկիստներին հանձնարարվում ե՝ պրովոկատորական աշխատանք կատարել բանվոր դասակարգի մեջ՝ ժողովրդական

Փրոնտը ներսից պայթեցնելու նպատակով, թուլացնել կոմունիստական կուսակցությունների աճող ազդեցությունը, զրպարտության և հետապնդման շարունակական կամպանիա կազմակերպել, Խորհրդային Միության դեմ Փաշխտական հետախուզությունների առաջադրանքներով լրտեսական, դիվերսիոն, տեռորիստական գործունեություն վարել:

Լրտեսական-տրոցկիստական խմբերի գլուխ են կանգնած մարդիկ, վորոնք վաղուց հայտնի յեն վորպես ստոր ունեզատներ, պրովոկատորներ և լրտեսներ:

Որինակ, Հարավսլավիայում տրոցկիստական խումբը գլխավորում է վոմն Յիլիզ, վորն խալական լրտես է և միաժամանակ հարավսլավական պահնորդական բաժնի գործակալ: «Գերմանիայի ինտերնացիոնալիստ-կոմունիստների» տրոցկիստական խմբի գլուխ են կանգնած գինովցեվական վիժվածքներ Ռուտ Ֆիշերը և Մասլովը: Ռուտ Ֆիշերը սերտորեն կապված է Հիտլերի գործակալի—Փրանսական Փաշիստ Դորիոյի հետ, իսկ Մասլովը գեստապոյի գործակալն է: Նորվեգիայում գործում է ամենաակտիվ տրոցկիստ Ուսֆ Շեֆլոնը, մի ունեզատ, վորը դավաճան Բուխարինի դաշնակիցն է: Այդ նա յե, վոր բանդիտական շայկայի ատաման Տրոցկու հետ միասին, գեստապոյի առաջադրանքով, կազմակերպել է լրտեսների առաքումը Խորհրդային Միություն: Ամերիկայում տրոցկիստական գործերը վարում է հայտնի ժուլիկ Իսթմենը, վորը Հիտլերի կողմնակից—Փաշիստ Հերստի առաջադրանքով, նրա (Հերստի) թերթերում լուսանք է թափում ԽՍՀ Միության բանվոր դասակարգի վրա: Տրոցկիստական այս ամբողջ գարշանքը, որեր-լրտես Տրոցկու և նրանից սերված Սեգովի առաջնորդությամբ միավորված է գերմանական գեստապոյի, պաճուպական, խալական և այլ հետախուզությունների կողմից ղեկավարվող միջազգային լրտեսական կազմակերպության մեջ:

Հասկանալի յե, թե ինչու տրոցկիստների «միջազգային» կոնֆերենցիան, վորը հրավիրվեց 1936 թվականի ամռանը՝ IV ինտերնացիոնալ կազմակերպելու համար, չհրապարակեց այն 15 «պատվիրակները» ազգանունները, վորոնցից կաղմված էր այն:

Այդ ձեռնառու չեք լինի Փաշիստական հետախուզություններին, վորովհետև տրոցկիստական-լրտեսական ինտերնացիոնալի «սեկցիաների» ղեկավարները ռոճիկ են նստանում Փաշիստական պետությունների գաղտնի վոստիկանությունից և սորեն բանվորական կազմակերպությունների կողմից մերկացված են վոր-

պես պրովոկատորներ, աշխատավորների ամենավտիաների թշնամիներ, միջազգային դեմոկրատիայի թշնամիներ:

Իրենց լրտեսական-քայքայիչ աշխատանքը ղեկավարելու համար Փաշիստական հետախուզությունների տրոցկիստական գործակալները հանդես են գալիս բանվորներին խաբելու նպատակ հետապնդող ամպաղոզոտ «հեղափոխական» անուններով: Փրանսիայում նրանք իրենց շայկան անվանում են «Ինտերնացիոնալիստական բանվորական կուսակցություն», Իսպանիայում՝ «Միացյալ մարքսիստների բանվորական կուսակցություն» (ՊՈՈՒՄ), Բելգիայում՝ «Սոցիալիստական հեղափոխական գործողության խմբակ» և այլն:

Իսկ ի՞նչպես են գործում տրոցկիստական լրտեսներն առանձին յերկիրներում:

* * *

Ամբողջ աշխարհի ուշադրությունը ներկա մոմենտում բեկեռված է իսպանական ժողովրդի հերոսական պայքարի վրա, ժողովուրդ, վորը պաշտպանում է իր ազատությունն ու անկախությունը գերմանական և խալական Փաշիստների ինտերվենցիայից: Արդեն մի ամբողջ տարի յե, վոր Իսպանիան հնազանդեցնելու, Մադրիդը գրավելու՝ գերման-խալական Փաշիստների բոլոր փորձերը ջախջախվում են հանրապետական բանակի կողմից, բանակ, վորին ստեղծել, կրթել և հանդերձավորել է ժողովրդական ճակատի կառավարությունը: Որ-որի միշտ ավելի ու ավելի յեն ամրանում Իսպանական հանրապետության ուժերը, իսպանական ժողովրդի հերոսական պայքարի յուրաքանչյուր օրը թուլացնում է խռովարարների ուժերը: Զուր չե, վոր գերմանական-խալական Փաշիստները բոլոր ջանքերը գործ են դնում, վորպեսզի Իսպանական հանրապետությունը պայթեցնեն ներսից և պռաջին հերթին՝ պայթեցնեն նրա գործոն ուժի աղբյուրը—ժողովրդական ճակատը: Դրա համար Փաշիստական պետություններն Իսպանիա յեն ուղարկել իրենց ամենից ավելի փորձված գործակալներին, վորոնք իրենց ամբողջ լրտեսական-դիվերսիոն աշխատանքը կենտրոնացրել են տրոցկիստական ՊՈՈՒՄ կազմակերպության մեջ: Այստեղ նրանք հին լրտես, ՊՈՈՒՄ-ի ղեկավարներից մեկի—Անդրե Նինայի (Տրոցկու նախկին քարտուղարի) ղեկավարությամբ մի ամբողջ շարք պրովոկացիոն յեղույթներ են կազմակերպում իսպանական ժողովրդի դեմ, կանոնավոր կերպով ռադա-քաղաքական տեղեկություններ են հաղորդում

զենեալ Ֆրանկոյին, մնաստարաբություն են կատարում ժողովրդական տնտեսութեան սխառմում :

Գինեալ Ֆրանկոյից հազորդաբություններ ստանալով ճակատներում պատրաստվող ակտիվ ուղեբացիաների մասին, տրոց-կիստները դրանց ելին հարմարեցնում թիկունքում իրենց կատարած պրովոկացիոն յեղույթները : Այսպես, Գվադալախարայի վրա խտալական հարձակում սկսվելու մոմենտին տրոցկիստական վիժվածքները ղինված յեղույթ կազմակերպեցին Վալենսիա-յի մոտ :

Բարսելոնում մայիսի 3—4-ին տրոցկիստների կազմակերպած արյունալի պուտչը, վորը բազմաթիվ զոհեր տարաւ, զուգադի-պեց Բիլբաոյի դեմ Փաշխտական ինտերվենտների ակտիվ դոր-ծողությունների սկզբին և ըստ ելույթյան կաշկանդեց Կատա-լոնիայի ակտիվ ոգնությունը Բասկերի Յերկրին :

Մադրիդում, քաղաքի վրա կատարված յուրաքանչյուր ում-բակոծումից հետո, տրոցկիստական լրտեսները ռադիոյով տե-ղեկացնում ելին Խոսովարար-զենեալներին ումբերի ընկնելու արդյունքների մասին և փաստորեն խոսովարարների հրանոթների բերանն ուղղել ելին տալիս Մադրիդի ամենից ավելի բնակեցված թաղամասերի վրա :

Հանրապետական տերիտորիայի մի շարք կետերում տրոց-կիստները խոսովարարներին իրադեկ ելին դարձնում նախապատ-րաստվող ռազմական ուղեբացիաների մասին, զորքերի տեղա-շարժի մասին, նախապատրաստվող զորհները մասին, վորով հակալական մնաս ելին հասցնում հանրապետական հերոսական բանակին :

Վալենսիայում վերջերս լիկվիդացիայի յենթարկվեց մի Փա-շխտական կազմակերպութուն : Նա իրեն նպատակ եր դրել զե-ներալ Ֆրանկոյի հարձակման ծավալման մոմենտին ղինված ապստամբութուն բարձրացնել և բանվորների ջարդ սարքել : Փա-շխտների պլանի համաձայն, նրանք պետք ե ամենից առաջ դրա-վելին ռադիոն, վորտեղից, իրր թե ժողովրդական ճակատի կո-միտեյի անունից, բանվորներին հրավիրեյին պրոֆկազմակեր-պությունների ակումբները, նրանց աշտեղ փակելու և վոչն-չացնելու համար : Այդ Փաշխտական կազմակերպութունը կապ-ված եր խտալացիների հետ, և նրա ղեկավարներից մեկը հանդի-սանում եր Եդուարդ Գարրեն—վալենսիական տրոցկիստների պա-րազուխը : Նա միջոցներ եր հավաքում Փաշխտական կազմա-

կերպությունների համար և փաստաթղթեր եր մատակարարում թաղնված Փաշխտներին :

Իսպանիայում ժողովրդական ճակատի դոյության ամբողջ բնթացքում տրոցկիստները, Տրոցկու անմիջական ցուցումով, հանդես են յեկել դեմոկրատական հանրապետութեան դեմ, քո-ղարկվելով «պրոլետարական հեղափոխութեան» համար անհապաղ պայքարելու կեղծ կոչով : Այդ պրովոկատորական դործողու-թյուններով տրոցկիստները ցանկանում ելին քայքայել ժողովրդ-ական ճակատը : Կատալոնական տրոցկիստները, ցանկանալով խանդարել անարխիստների մերձեցումը կոմունիստների հետ, նողկալի դրպարտանք ելին թափում ինտերնացիոնալ բրիգադնե-րի—միջազգային պրոլետարիատի այդ առաջավոր մասերի հաս-ցեյին :

Տրոցկիստներն ամենաստոր միջոցներով վիժեցնում ելին հան-րապետական բանակում հաստատված կարգապահութունը, դո-րամասերի ճիշտ կենտրոնացված կառուցումը, նրանց յենթարկ-վելը միասնական հրամանատարութեանը : Իսպանիայի հասարա-կական անվտանգութեան որդանների կողմից 1937 թվականի հու-նիսին բացահայտվեց Փաշխտական լրտեսական կենտրոն, վորը ղեկավարում ելին տրոցկիստները : Տրոցկիստական ՊՈՈՒՄ կազ-մակերպութունը խուզարկելու ժամանակ հայտաբերված փաս-տաթղթերը և ձերբակալվածների ցուցմունքները վկայում են, վոր Նինայի ղեկավարած տրոցկիստական կազմակերպությունը սերտորեն կապված եր զենեալ Ֆրանկոյի հետ և զուտ լրտե-սական աշխատանք եր կատարում : ՊՈՈՒՄ կազմակերպութեան ձերբակալված անդամների մեջ զգալի քանակութեամբ ոտարերկ-րյա հետախույզներ կան :

Իսպանական «Լյա Որա» թերթի իրավացիորեն գրում ե, վոր լրտեսութեան տրոցկիստական կենտրոնի բացահայտումը «հան-դիսանում ե Փաշիզմի դեմ ձեռք բերված հակալական հաղթա-նակ» :

* * *

Արեմտա-յեվրոպական պետությունների մեջ Ֆրանսիան գրա-վում ե զերմանական զեստապոյի և խտալական հետախուզու-թեան առանձնահատուկ ուշադրությունը :

Ֆրանս-խորհրդային փոխադարձ ոգնութեան դաշնագրի կըն-քումը, Ֆրանսիայի պաշտպանունակութեան ամրապնդումը, ժո-ղովրդական ճակատի հաղթանակը և նրա հետ կապված Ֆրան-

սական աշխատավորական մասսաների նյութական գործընթացն
բարելավումը, ինչպես նաև Փրանսական կոմկուսակցության ադ-
իպցիոնական հսկայական աճն ամրապնդում են դեմոկրատիայի
ուժերն Արևմտյան Յեյբրուպայում և դրանով իսկ թուլացնում են
համաշխարհային ֆաշիզմի ուժերը:

Գեոտապոլիս Փրանսիա յե ուղարկում իր հարյուրավոր գոր-
ծակալներին և նրանց միջոցով փորձում է պայթեցնել ժողովրդ-
դական ճակատը, զրպարտել ԽՍՀՄ-ն, վարկաբեկել Փրանս-
խորհրդային պայմանագիրը, քաղաքացիական պատերազմ բոր-
բոքել Փրանսիայում: Գերմանական ֆաշիստներն այդ բանի հա-
մար կողմնակիցներ են դառնում վոչ միայն Դե լյա Ռոկի տիպի,
ոչնչապա ֆաշիստ Դորիոյի տիպի Փրանսական ֆաշիստների
չըջանում: Նրանց համար արժեքավոր գլուխ հանդիսացան Փրան-
սական տրոցկիստները:

Գեոտապոլիս և խաղական հետախուզության գործակալները
հիմնավորվեցին Փրանսական տրոցկիստական խմբակներում: Այդ
տրոցկիստական խմբակները քողարկվում են զանազան ամպա-
դոգորո առուններով տակ, ինչպես, որինակ, «Ինտերնացիոնա-
լիստական բանվորական կուսակցություն», «Ինտերնացիոնալիս-
տական կոմունիստական կուսակցություն», «Ինչ անել» խմբերը:
Նրանցից վոմանք իրենց անվանում են «IV ինտերնացիոնալիս»
սեկցիաներ:

Այդ խմբերի գործունեությունն ըստ ելույթյան վոչնչով չի
տարբերվում Փրանսական ֆաշիստների — ոչնչապա Դորիոյի և
Փրանսական մյուս ֆաշիստական խմբերի—գործունեությունից:
Նրանք զրպարտիչ կամպանիա յեն մղում Խորհրդային Միության
դեմ, պնդելով, վոր Փրանսիայի ու ԽՍՀՄ-ի փոխադարձ ոչնո-
թյան պակտի խղումը և Գերմանիայի հետ դաշինք հաստատելը
հանդիսանում է Փրանսիայի հետագա գոյություն անհրաժեշտ
պայմանը: Փրանսիայում տրոցկիստներն այդ գիծը տառացիոր-
բեն թելադրված է գեոտապոլիս կողմից: Չե՞ վոր հենց դրա մա-
սին է ճշում գերմանական ֆաշիստական մամուլը և այդ իսկ
ուղղությունը են գործում գերմանական դիվանագետները, վորոնք
աշխատում են, վոր Փրանսիան խզի Փրանս-խորհրդային պակտը:

Տրոցկիստական լրտեսների գլխավոր խնդիրն է՝ վարկաբե-
կել և պայթեցնել ժողովրդական ճակատի միասնությունը:

Ձրպարտելով կոմկուսակցության հասցեյին, տրոցկիստները
ռադիկալներին կոչ են անում խզել կապերը կոմունիստների հետ:
Մյուս կողմից, քողարկվելով ձախ ֆրազներով, նրանք բանվոր-

ներին հորդորում են վորեւ բարելավում չսպասել ժողովրդա-
կան ճակատի վրա հենված սոցիալական որենսդրությունից:

Փրանսիայում տրոցկիստական խմբակների դադափարական
ներչնչողը հանդիսանում է յեփված ավանտյուրիստ և սրիկա Սու-
վարինը: Դավաճանություն հարուստ փորձ ունենալով, Կոմու-
նիստական Ինտերնացիոնալից խայտառակ կերպով վտարվելով,
Տրոցկու թունդ հետևորդ Սուվարինը մասնագիտացել է Խորհրդ-
դային Միության դեմ նողկալի զրպարտանք տարածելու մեջ:

Իր կեղտոտ բրոշյուրներով, իր շեֆի—բանդիտ Տրոցկու—
առաջադրանքով, նա փառաբանում է ընկեր Կիրովին սպանող-
ներին և նոր տեոորիստական ակտերի կոչ է անում: Նա տենչում
է Խորհրդային Միության ռադմական պարտությունը: Խորհրդ-
դային Միության, ժողովրդական ճակատի հասցեյին ամենա-
սուր զրպարտանքով լի այդ բրոշյուրներից՝ Փրանսիայում յե-
ղած հիտլերյան գործակալները—տրոցկիստները, «դադափարներ»
են քաղում իրենց լրտեսական և վնասարարական աշխատանքի
համար:

Անցնենք Ամերիկային: Ամերիկյան բանվորական շարժումը
վերջին տարվա ընթացքում դուրս է գալիս քաղաքական ան-
տարբերության այն փակուղուց, վորտեղ նրան տարել է Ամերի-
կյան Աշխատանքային Ֆեդերացիայի ղեկավարող վերնախավը:
Արտադրական արհմիությունների կոմիտեյի կադմակերպումը,
արհմիություններ, վորոնք միավորում են ավտոմոբիլային,
պողպատաձուլական և արդյունաբերության այլ ճյուղերի ավելի
քան յերկու միլիոն կադմակերպված բանվորներ, գործադուլների
հաջող անցկացումը մի ամբողջ շարք քաղաքներում, մասսայա-
կան շարժումը՝ պատերազմի և ֆաշիզմի դեմ, մի ամբողջ շարք
նահանգներում բանվորական—ֆեդերական կուսակցության կադ-
մակերպումը, միասնական ճակատ հաստատելու ուղտին յեղած
ավելի ու ավելի աճող շարժումը, կոմկուսակցության աճը—ահա
փաստեր, վորոնք խոսում են Ամերիկայի բանվոր դասակարգի
քաղաքական աճի մասին:

ԱՄՆ-ի կոմկուսակցությունը հարկադրված է կատաղի պայ-
քար մղել ամերիկյան բուրժուազիայի ղեկավարող ուժերի դեմ,
տրոցկիստական լրտես—պրովոկատորների դեմ:

Ամերիկայում տրոցկիստներն ինքնուրույն կադմակերպու-
թյուն չունենալով, ներթափանցել են սոցիալիստական կուսակ-
ցության մեջ և քողարկվելով սոցիալիստական կուսակցության

անդամների կուտումներով, իրենց նողկալի աշխատանքն են կատարում այնտեղ:

Յերբ սկսվեց իսպանական հանրապետության ռզնությունը, տալու շարժումը, տրոցկիստները, Տրոցկու առաջադրանքով, զործելով նրա հոգվածների վողով, վորոնք հրապարակված են Ֆաշիստ Հերատի թերթերում, պրովոկատորական հետևյալ լողուններն առաջադրեցին. «Իսպանիայի ժողովրդական Ֆրոնտը դավաճանում է իսպանական հեղափոխությանը», «Ձեռքը դարձրեք ժողովրդական ճակատի դեմ»: Ամերիկյան տրոցկիստները հանդիսանում են նաև շտրայկերիսերներ. բանվորների դործադուլների պահին տրոցկիստներն ամեն բան անում են դործադուլները վիժեցնելու համար: Այսպես յեղավ 1937 թվականի սկզբին իսպանական իրադարձությունների նախաստիների դործադուլի ժամանակ: Այդ դործադուլի ժամանակ դործող տրոցկիստական դործակալության գլուխ կանգնած եր ավանտյուրիստ Մեյսը, վորը մինչ այդ Միչիգան նահանգում բանտ եր նստել բանկը կողպաած լինելու համար:

Ձեռնարկատերերի առաջադրանքով տրոցկիստական բանդաները հանդես ելին դալիս շտրայկերիսերների հետ միասին նաև կալիֆորնիայում, Մինեսոտայում և ուրիշ վայրերում յեղած դործադուլների ժամանակ:

Տրոցկիստները բոլոր ուժերով և միջոցներով խոչընդոտ են հանդիսանում սոցիալիստական և կոմունիստական կուսակցությունների միասնական ճակատի ստեղծմանը: Իսկ այն կազմակերպություններում, վորտեղ միասնական ճակատ ստեղծված է, նրանք փորձում են այն ներսից պայթեցնել: Այսպես, նրանք կեղտոտ կամպանիա ծավալեցին ընդդեմ «Պատերազմի և Ֆաշիզմի դեմ պայքարող ամերիկյան լիգայի» — միասնական ճակատի մի կազմակերպության, վորը միավորում է ավելի քան 3 միլիոն հոգի:

Տրոցկիստներն ամեն կերպ Ֆաշիստական զրպարտություն են տարածում խորհրդային Միության հասցեյին, ամեն միջոցով պայքարելով ԱՄՆ-ի և իՍՂՄ-ի մերձեցման դեմ: Այստեղ ել, ինչպես մյուս յերկրներում, տրոցկիստները հանդես են դալիս վորպես Ֆաշիզմի վարձկան դործակալներ: Հունիսին հակակոմունիստական միտինգ եր կազմակերպված: Այդ միտինգում հանդես յեկավ ռեակցիայի ամենանշանավոր ներշնչողներից մեկը — Սմիտը: Այդ իսկ ամբիոնից հանդես յեկավ նաև բանդիտ-տրոցկիստ Իսթմենը: Նա կոչ եր անում Ֆիդիկապես վոլնչացնել կո-

մունիստներին, թույլ չտալ, վոր միասնական ճակատ ստեղծվի:

Բուրժուազիան յերախոհատույց է լինում տրոցկիստական յրաեսներին: Ամերիկայի ռեակցիոն և Ֆաշիստական շրջանների ճնշման և ուղղակի սպառնալիքների շնորհիվ Մեքսիկայի հանրապետության նախագահ Կարդենասը, մերժելով Մեքսիկայի բանվորական կազմակերպությունների պահանջը՝ Տրոցկու մուտքը Մեքսիկա արգելելու մասին, — Տրոցկուն արտոնեց ապրելու Մեքսիկայում: Հասկանալի յե, վոր Տրոցկին այդ ծառայություն համար իր կաշուց գուրս է դալիս, վորպեսզի հալատարությունը յույց տա իր տերերին — Ֆաշիստներին: Հերատի Ֆաշիստական մամուլը սիրալիք կերպով իր եջերը տրամադրում է Տրոցկու զրպարտիչ հոգվածներին:

Մի յերկրից մյուսը տեղափոխելով, բանվոր դասակարգի անեծքով և ատելությամբ քշված, նողկալի իժ Տրոցկին իրեն ավելի ապահով է զգում վոստիկանություն և դադունի հետախուզության պահանջության տակ: Այսպես եր Նորվեգիայում, այսպես է և Մեքսիկայում:

Հետաքրքիր է նշել, վոր Ֆրանսիայի, Հոլանդիայի, Բելգիայի և մյուս յերկրներին տրոցկիստներն իրենց դավաճանական աշխատանքը կատարելով Տրոցկու առաջադրանքով և «չպարզապես ներով» (զադտնաթերթիկ)՝ հաճախ թագցնում են իրենց կողմը նրա հետ:

Ճապոնա-դերմանական Ֆաշիստական հետախուզության դործակալ, բանվոր դասակարգի կողմից յերեցս նողմված Տրոցկու անունը միանգամից կմերկացներ տրոցկիստների դեմքը, յեթե նրանք բացելեաց հայտարարեյին իրենց «չեֆի» հետ համերաշխ լինելու և կոստակտ ունենալու մասին:

* * *

Ֆաշիստական Գերմանիան հարձակում պատրաստելով իՍՂ Միության դեմ և իՍՂՄ-ին սահմանակից պետություններին — Ռումինիայից ու Լեհաստանից հակախորհրդային բոլկ ստեղծելով, այդ պետություններում հիմնում է վոչ միայն իր Ֆաշիստական կազմակերպությունները, այլև տրոցկիստական կազմակերպություններ՝ պրովոկատորական-դիվերսիոն աշխատանքի համար:

Որբեր-բանդիտ Տրոցկին՝ իՍՂՄ-ում դիվերսիոն աշխատանքի մեթոդների և սոցիալիզմի յերկրի դեմ պատերազմ նախապատրաստելու մասին, Հիտլերի տեղակալ Հեսսի հետ ունեցած

Հայտնի պայմանագրերից հետո, իր մոտ, Նորվեգիա կանչեց ուժ-
միջնական ռենեգատներին ղեկավար Գեյլերտերին: Տրոցկին Գեյլեր-
տերին «առաջադրանք» տվեց՝ տրոցկիստական-գլխերսիոն-լրտե-
սական խմբեր կազմակերպել Ռուսիայում և ուսումնական «յեր-
կաթյա գլխադեղի» հետ կոնտակտ պահելով, պրոլետարիոն
աշխատանք կատարել Ռուսիայի աշխատավորության դեմ,
Խորհրդային Միության դեմ, «ապահովված թիկունք» ստեղծե-
լով ԽՍՀՄ-ի դեմ Փաշիվիկի կողմից պատերազմ մղելու դեպքում:

Կատարելով որևէ-լրտես Տրոցկու առաջադրանքը, Գեյլեր-
տերը ուսումնական հետախուզության—«սիգուրանցայի» գիտու-
թյամբ լայն ծավալեց իր խմբի («Ունիտար սոցիալիստներին կու-
սակցության») աշխատանքը: Այդ տրոցկիստական-լրտեսական
չափան ամեն կերպ վիժեցնում է միասնական ճակատի ստեղ-
ծումը Ռուսիայում, արհմիությունների միասնությունը, զըր-
պարտանք է տարածում ԽՍՀՄ-ի դեմ, սիգուրանցայի ձեռքն է
հանձնում կոմունիստներին: Բուխարեստի բանվորների դահլիճը,
վոստիկանական կոմիտար Անանիուն, ձերբակալվածների ծեծե-
լով, նրանց խորհուրդ է տալիս մտնել Գեյլերտերի կուսակցու-
թյան մեջ: «Գեյլերտերի կուսակցությունը,— «ազխտացիա» չե
մղում նա ծեծվողների մեջ,—ամբողջ ձախ է կոմունիստականից
և լիակատար ազատություն է վայելում»:

Ռուսիական-տրոցկիստական բանդայի ղեկավարությունը
բաղկացած է գործակալ-պրոլետարիոններից,—Ստեպան Վոյտե-
կից, վորն անձամբ կապված է Փաշիստական «յերկաթյա գլխա-
դեղի» հետ, Վուրմբրանդտից—սիգուրանցայի գործակալ և Փա-
շիստական «յերկաթյա գլխադեղի» անդամ Կրիստեսկուից —
ամբաստյուրիստ, սպեկուլանտ և մութ գործարար, ռենեգատ
Դոմիտրուից և ուրիշներից:

Վուրմբրանդտը Տիմիշորում սիգուրանցային մատնեց 30
բանվորների և Տիմիշորի սիգուրանցայի կոմիտար Ուրբաչևիին
ոգնեց զատավարության ինսցենիրովկայի գործում: Մյուս տրոց-
կիստական լրտեսը—Իլյա Դոմիտրուն, վորը կոմկուսակցությու-
նից վտարվել է Բուխարեստում «Լեմետրի» բանվորների պայ-
քարը վիժեցնելու և անդամավճարները գողանալու համար, սի-
գուրանցային մատնեց յերկաթուղայինների գործադուլի ղեկա-
վարներից մեկին—ընկեր Վասիլիկիսին: Վասիլիկիսը քսան տար-
վա տաժանակրության դատապարտվեց:

Սիգուրանցայի գործակալ-տրոցկիստներին համար «ազխտա-
ցիայի» և «պրոպագանդայի» «նյութ» մատակարարողը հանդի-

սանում է Յեֆիմ Բարբուն — «Ռուսիայի ներկայացուցիչը»
«IV ինտերնացիոնալում»: Բարբուն առաջ ապրում էր Ֆրանսիա-
յում, սակայն Ռուսիայում Փաշիստների ազդեցության աճից
հետո, սիգուրանցայի համաձայնությունով, յեկավ Ռուսիա:
Ռուսիական հետախուզության գիտությունը նա բացելուց հան-
դես է դալիս «Հրապարակային» դատախոսություններով, վորոնք
ուղղված են կոմունիստական կուսակցության, ժողովրդական
ճակատի, Խորհրդային Միության դեմ:

Լեխաստանում լեհական հետախուզությունը—«դեֆենզիվա»-ն
—վաղուց փորձում է ձերբակալվածների մեջ «տրոցկիզմի» պրո-
պագանդա մղել, նրանց ազատություն խոստանալով այն դեպ-
քում, յեթե նրանք պարտավորություն հանձն առնեն մտնել
տրոցկիստական խմբակների մեջ և գլխերսիոն, պրոլետարա-
կան աշխատանք կատարել:

Անցնենք Չինաստանում յեղած դրությունը: Ճապոնիան,
պատրաստվելով «մեծ պատերազմի», այսինքն Խորհրդային Միու-
թյան դեմ մղելիք պատերազմի, յերկար տարիների ընթացքում
իր լրտեսական, գլխերսիոն ցանցն էր արմատավորում ԽՍՀՄ-
ում, այդ բանի համար ոգտադործելով Լիվիցի, Կնյազևի տի-
պի տրոցկիստական լրտեսներին, վնասարարներին, գլխերսանո-
նեին և այլ դավաճանների: Ճապոնական հետախուզությունը
գործում է նաև Մոնղոլական ժողովրդական հանրապետության և
Չինաստանի դեմ: Չինաստանն իր հյուսիսային նահանգներով
հետաքրքրել է և հետաքրքրում է Ճապոնիային վոչ միայն վոր-
պես թալանի, տնտեսական ու քաղաքական ստրկացման որչեկտ,
այլև վորպես պլազդարմ՝ ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար:
Դրա համար էլ հասկանալի յե Ճապոնիայի և նրա հետախուզու-
թյան առանձնահատուկ հետաքրքրությունը դեպի Չինաստանի
հյուսիսային նահանգներից մեկը—Շանսին: Այդ նահանգը գտնը-
վում է Մոնղոլական ժողովրդական հանրապետության մոտ և
Ճապոնիայի գլխավոր շտաբի պլանում հանդիսանում է այն տե-
րիտորիան, վորտեղ պիտի կենտրոնացվեն ռազմական բազաները՝
ԽՍՀՄ-ի դեմ «մեծ պատերազմ» սկսվելու մոմենտին: Շանսին
միաժամանակ սահմանակից է այն նահանգներին, վորտեղ խիստ
զարգացել է ազգային-ազատագրական շարժումը, վորտեղ կենտ-
րոնացված են հակաճապոնական բանակները, վորտեղ առանձ-
նապես մեծ է չինական կոմկուսակցության ազդեցությունը:

Այդ նահանգն «ամրապնդելու» և այն իր հենակետը դարձ-
նելու համար ճապոնական հետախուզությունն այստեղ է ուղար-

կում իր դործակալներին—տրոցկիստներին, վորպես տեղական չինական միլիտարիստական խմբերի մերձավոր «ողջականներ»:

Տրոցկիստներն իրենց շտաբ-բնակարանն են կաղձակեցրել Տայուանի մեջ (Շանսիի գլխավոր քաղաքում): Տրոցկիստների հետ համաձայնության դալով, տեղական չինական միլիտարիստները պայման են դրել, վոր տրոցկիստների ամբողջ դործունե-յությունը պիտի յենթարկվի իրենց վերահսկողությանն ու Շանսի նահանգում տրոցկիստական կաղձակեցրությունը պիտի դըլ-խավորվի իրենց տեսակետից հարմար և անպայման «ստուգված» մարդու կողմից: Տրոցկիստները դրան համաձայնվեցին:

Չինական միջանի առանձնապես ծախված գեներալներ տրոց-կիստներին ամեն ամիս դոտացիա յեն տալիս հետախուզական աշ-խատանքի համար ձապոնիայից ստացված միջոցներից և տրոց-կիստական լրտեսներին տեղավորում են «յուզալի տեղերում» բարձր ոռճիկով:

Իմանալով տրոցկիստների անգերադանցելի պրոփոկատորա-կան դերը, միլիտարիստները նրանց ոգտադործում են վորպես դործակալ-պրոփոկատորներ՝ իրենց դորքի մեջ և չինական կար-միր բանակի դեմ ուղարկված պատժիչ դորամասերում: Նրանք նրանց ոգտադործել են նաև դեղին պրոֆիտություններ, այսպես կոչված «սոցիալիստական ֆեդերացիա» կաղձակեցրելու համար, վորոնք պայքար են մղում Չինաստանում բանվոր դատակարգի դեմ: Տրոցկիստները քիչ չինական կոմունիստների չեն մատնել դահլճ գեներալների ձեռքը, շատ կոմունիստներ են մահադատվի յենթարկվել:

ձապոնական հետախուզությունն իր ցանցն ունի նաև Չինաս-տանի խորհրդային ռալոններում: Այստեղ էլ նրա լավադուլն դործակալները հանդիսանում են տրոցկիստները, վորոնք միա-հյուսվել են աջ ունեդատների — չենդուսիստների հետ: Այդ նրանք են, վոր ձապոնական ուղիղներտների առաջադրանքով, յերկերեսանիություն անելով և քողարկվելով ձեռք բերած կուս-տոմսերով, գիվերսիոն ակտեր են կաղձակեցրում, ապստամբու-թյուններ են սարքում, լրտեսական տեղեկություններ են հաղոր-դում և անկյունից սպանում են խորհրդային ակտիվիստներին ու շարքային կարմիր-բանակայիններին: Այսպես, ձապոնական լըր-տես տրոցկիստները կաղձակեցրելն չինական ժողովրդի հերոս Ֆան Չի-մինի — չինական կարմիր բանակի 10-րդ կորպուսի հրամանատարի—սպանությունը:

Վերջին տարվա ընթացքում Չինաստանում լայնորեն ծա-

վալվել է հակաձապոնական շարժումը, վորն ընդգրկել է բնակ-չության բոլոր խավերին: Աղգային միասնական ճակատ է ստեղծ-վում առնատարբեր կաղձակեցրություններից, վորոնք իրենց նպատակ են դրել հակահարված կաղձակեցրել ձապոնիայի դեմ: Այդ շարժումը գնալով ավելի ու ավելի կողմնակիցներ է գտնում Գոմինդանի ղեկավարության մեջ: Այսպես, Գոմինդանի վերջին պլենումում Չինաստանի յերեք ամենից ավելի կարևոր նահանգ-ների ղեկավարները և 17-րդ բանակի ներկայացուցիչներն արտա-հայտվեցին հողուտ միասնական ճակատի հաստատման չինա-կան կոմկուսակցության հետ:

ձապոնական խմբերիսլովմը գիտե, վոր հակաձապոնական ժողովրդական ճակատի դարդացումը հարված է իր հափշտակո-ղական վտանգություններին Չինաստանում, բարդացնում է «մեծ պատերազմի» նախապատրաստումը: Ահա թե ինչու ձապոնական հետախուզությունն իր դործակալներին—տրոցկիստներին ցուցում է տալիս՝ աշխատել պայթեցնել ժողովրդական ճակատը: Այդ բանի համար ձապոնական հետախուզության դործակալները, տրոցկիստական պրոփոկատորները, վորոնք սողոսկել են ժողովր-դական ճակատի միասնության կոմիտեի ղեկավարության մեջ, խեղաթյուրում են միասնական ճակատի իսկական խնդիրները, առաջ են քաշում գեմադողիական լողուններ, աշխատելով չի-նական բնակչության առանձին խմբերին հետ մղել միասնական ճակատից: ձապոնական հետախուզության առաջադրանքներով, տրոցկիստները բորբոքում են ձապոնական Փաշիստական շրջան-ների գրպարտչական կամպանիան՝ ուղղված ԽՍՀՄ-ի դեմ:

Տեսնելով Շանհայի բանվորների ուժեղացող քաղաքական ակ-տիվությունը, ձապոնական հետախուզությունը, հանձին ձապո-նական գլխավոր շտաբի 2-րդ բաժանմունքի, Շանհայ է տեղա-փոխում չինական տրոցկիստների ղեկավար Խուան Պինին, վորին առաջադրանք է տրվում, —գրպարտություն տարածելով ժողո-վրդական—ադատադրական շարժման դեմ, յերկերեսանիություն անելով, ներթափանցել բանվորական կաղձակեցրությունները, ամեն կերպ կաղձալուծել դրանք և արգելք հանդիսանալ կոմու-նիստների ուժեղացող աղղեցությանը:

Ոգտադործելով Շանսիի նահանգում տրոցկիստների աշխա-տանքի «փորձը», Խուան Պինը Շանհայը դարձրել է տրոցկիստ-ների գլխավոր շտաբ-բնակարանը Հեոավոր Արեելքում:

Տրոցկիստական բանդիտների, վորպես ֆաշիստական հետախուզութիւնների ուղղակի դործակալների, մերկացումը ԽՍՀՄ-ում միջազգային պրոլետարիատին և ամբողջ աշխատավոր մարդկութեանը ցույց տվեց ժամանակակից տրոցկիզմի քստմենքի դեմքը: Տրոցկիստական լրտեսների, դիվերսանտների և վնասարարների դործերի դռնբաց դատավարութիւնները միջազգային մասշտաբով խորտակիչ հարված հասցրին ֆաշիստական հետախուզութիւնների տրոցկիստական դործակալներին:

Ծանոթանալով դատական հաշվետվութիւններին, աշխատավորները սովորեցին մերկացնել տրոցկիստական լրտեսներին իրենց յերկիրներում: Նրանք համոզվեցին ընկեր Ստալինի խոսքերի պատմական նշանակութեան մեջ. «Արդի տրոցկիզմը քաղաքական հոսանք է բանվոր դասակարգի մեջ, այլ վնասարարների, դիվերսանտների, հետախուզների, լրտեսների, մարդասպանների անսկզբում և գաղափարագուրկ բանդա, բանվոր դասակարգի վոյսերիւմ քշնամիների մի բանդա, վորոնք ոտարերկրյա պետութիւնների հետախուզական որգանքների մետ գործում են վարձով»¹:

Պոկելով տրոցկիստական բանդիտների դեմակը, Խորհրդային Միութիւնը խորտակեց պատերազմի ֆաշիստական հրձիգների նենգ պլանները և դրանով իսկ վերստին ամրապնդեց դեմոկրատիայի ու խաղաղութեան դիրքերը բոլոր յերկիրներում:

Հասկանալի յե Խորհրդային Միութեան դեմ յեղած զրպարտանքի կատաղի կամպանիան, վոր բարձրացրել են ֆաշիստական թերթերը և տրոցկիստական կեղտոտ թերթիւնները, իրենց պաշտպանութեան տակ առնելով զնդակահարված բանդիտներին: Չե՞ վոր Խորհրդային Միութեան մեջ վոչնչացվեցին վորակալ լրտեսներ, տրոցկիստական-ֆաշիստական ընդհատակի «դենեռաները»: Անվանվեցին և անարդանքի սյունին դամվեցին կապիտալիստական յերկիրներում յեղած տրոցկիստական դործակալ-պրովոկատորները և նրանց տերերը — ֆաշիստական հետախուզութիւնների ղեկավարները:

Կապիտալիստական յերկիրներին բանվորներն այժմ իրենցից

¹ Ստալին. Կուսակցական աշխատանքի թերութիւնների և տրոցկիստական ու այլ յերկրեսանիւնների լիկվիդացիայի միջոցառումների մասին: Հայկուհրատ, հի 17, 1937 թ.:

քշում են տրոցկիստներին, վորպես ծախված լրտեսների ու պրովոկատորների:

Խալանիայում հանրապետական կառավարութիւնը, բանվորական կազմակերպութիւնների պահանջով, լիկվիդացիայի յենթարկեց տրոցկիստական խմբերը, փակեց նրանց թերթերը և ձերբակալեց վարձու մարդասպանների այդ բանդայի ղեկավարներին:

Ֆրանսիայում բանվորներն ընտրութիւններին խայտառակ կերպով տապալեցին ֆաշիստ Դորիոյին, վորին տրոցկիստներն ամեն կերպ պաշտպանում եյին:

Ամերիկայում «Տրոցկու պաշտպանութեան կոմիտեյից» դուրս յեկան մի շարք բուրժուական ականավոր գործիչներ, վորոնք հայտարարեցին, թե իրենք չեն կարող մնալ այդ կոմիտեյում, վորովհետեւ Տրոցկին վոչ մի բանով չի կարող ապացուցել, թե ինքը մասնակցութիւն չի ունեցել դավաճանութեան և ֆաշիստական պետութիւնների հետ կապ ունենալու գործում:

ԱՄՆ-ի սոցիալիստական կուսակցութեան ղեկավարութեան կողմից տրոցկիստներին ցույց տրված հովանավորութեան արդեն ուղղակի կերպով անդրադարձավ սոցիալիստական կուսակցութեան դրութեան վրա. յեթե 1936 թվականի առ 1-ն հունվարի սոցիալիստական կուսակցութիւնն ուներ մոտ 18 հազար անդամ, ապա 1937 թվականի առ 1-ն հունվարի մնացել եր ընդամենը 6000 անդամ:


Ամերիկայի սոցիալիստական կուսակցութեան ղնալով ավելի ու ավելի մեծ թիւով անդամներ պահանջում են տրոցկիստներին վտարել իրենց շարքերից, մատնանշելով, վոր տրոցկիստների նկատմամբ ցույց տրված հանդուրժողական վերաբերմունքն արդեն պատճառ ե դարձել բանվորական մասսաների վրա սոցիալիստական կուսակցութեան ազդեցութեան խիստ թուլացմանը:

Չնայած տրոցկիստական լրտեսների պրովոկացիայի նուրբ մեթոդներին, կապիտալիստական յերկիրների բանվորական կազմակերպութիւնները, յուրացնելով տրոցկիզմի դեմ խորհրդային ժողովրդի մղած անողոր պայքարի փորձը, բարձրացնում են իրենց զգաստութիւնը, ֆաշիստական հետախուզութիւնների այդ գործակալներին քշում են իրենց շարքերից:

Չանազան յերկիրներում տրոցկիստների լրտեսական բանդա ստեղծելով, Տրոցկին և նրա տերերը—ֆաշիստական հետախու-



զուգույնը—նկատի յեն ունեցել պրովոկացիայի թույնով հար-
ված հասցնելու դեմոկրատիային, ժողովրդական ճակատին,
խախտելու խորհրդային Միության հեղինակությունը: Այդ նրանց
չհաջողվեց և յերբեք չի հաջողվի:



Թարգմ. Վիվան

Խմբագիրներ՝ Ս. Կիրակոսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Մրբագրիչ Ա. Նիշունյան

Կոնսուլ սրբագրիչ Լ. Արուստյան

Գլավիտի լիազոր ի—4917, հրատ. № 496

Պատվեր № 163, տիրած 5,000

Հանձնված է արտադրության 13/VIII 1937 թ.

Ստորագրված է տպագրելու 20/VIII 1937 թ.

Դիմել 25 Կ.

Հայկուսհրատի տպարան, Յերևան, Ալավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0977614

412

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

5 СЕН. 1937

11

28520

30

В. КОЛЕСНИК
ШПИОНСКИЙ ИНТЕРНАЦИОНАЛ
(Троцкисты на службе фашистских разведок)
Армипартиздат, Ереван, 1937